

Հ. Մէնէվիշեանի այս աշխատանքը մեծ խնամքով և առանձին սիրով պատրաստուած մի գործ է, որ ցոյց է տալիս, թէ հեղինակն զբաղուած է հայերէն բառեր հաւաքելով և ուսումնասիրելով (եր. 7): Բացի այն որ Մագիստրոսի մի նամակը սրանով հասկանալի է դարձած, բացատրուած են բազմաթիւ հայերէն հնացած և անհասկանալի բառեր, որոնք չեն մտնում ծանօթ բառարանների մէջ: Հ. Մէնէվիշեանը թէպէտ չի ուսումնասիրում Մագիստրոսը, բայց նրա աշխանքը մեր զրականութեան պատմութեան համար ևս մասնակի նշանակութիւն ունի. նա մի քանի գծերով բնորոշում է Մագիստրոսի երկը. երևում է, որ 11-րդ դարու այս բազմահմուտ հայ ազգասէր գիտնականը տեղեակ է եղել նաև բժշկականութեան, շատ տեղեկութիւններ է տալիս մարդակազմութեան և ախտաբնութեան վրայ. նա իր «Գամագտականի» մէջ օգտուել է յոյն կատակերգու Արիստոֆանից: Մ. Ա.

Л. М. Мелнксетъ — Бековъ. Старинныя Армянскія Надписи въ Музеѣ Общества исторіи и древностей въ Одессѣ. Тифлисъ 1912.

Այս գրքոյկի մէջ տրուած է Օդեսսայի պատմութեան և հնութիւնների թանգարանում պահուող երեք հայերէն արձանագրութիւնների նկարագիրը պատկերներով և նրանց ընթերցումը: Դրանցից մէկն է «Յիշատակ է ազբիւրս Փառակեցի Ռսկանայ Սահակի որդի պարոն Թևանի աղային և որդոյն Գէորգին, դստերացն արևուն, և համայն ընտանեացն կենդանեացն և ննջեցելոց հոգուն. շինեցաւ թվին ՌՃՂԲ ին» 1743 թ. Փրկչին: Այս արձանագրութիւնը բերուած է Աքքերմանից: Երկրորդ արձանագրութիւնն է մի խաչ քար 1700 թուականի. իսկ երրորդ արձանագրութիւնը վերաբերում է դարձեալ մի աղբիւրի. քարի մի կտորն է միայն մնում, որի վրայ սակայն կայ Գենուայի գինանիշը, որը ցոյց է տալիս, ըստ հեղինակի, թէ արձանագրութիւնը Գենուացոց տիրապետութեան շրջանից է, յատկապէս 1378—1396:

Մ. Ա.